«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«06» 05 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-08/15 բողոքը քննող

Հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. թիվ 1.1/13.3/[9984]-13 գրությամբ ներկայացված «Մադոննա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 05512212), անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին (ՀՎՀՀ 60509377), Վահրամ Մելքոնյանին (ՀՎՀՀ 60509385), Գառնիկ Վարդերեսյանին (ՀՎՀՀ 57262425) և Ռաֆայել Գրիգորյանին (ՀՎՀՀ 57279331) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրե-

լով ուսումնասիրել «Մադոննա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն), անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Ռաֆայել Գրիգորյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը և անհատ ձեռնարկատերերին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ Կենտրոն է ուղարկել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.07.2013թ. ԱՇ/ԱՊ N16/2011/239-13 գրության և «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի, Ռաֆայել Գրիգորյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի թիվ 75-Ա որոշման պատճենները:

2. <u>«Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «դ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 05.03.2015թ. թիվ 09/032-398, 06.03.2015թ թիվ 09/032-405, թիվ 09/032-406, թիվ 09/032-407 և թիվ 09/032-408 գրություններով դիմել է «Մադոննա» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Ռաֆայել Գրիգորյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Վահրամ Մելքոնյանին, սակայն նրանցից պատասխան չի ստացվել:

Կենտրոնում 09.04.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերության ներկայացուցիչը և Ա/Ձ Վահրամ Մելքոնյանը հայտնել են, որ չեն առարկում, որպեսզի ներառվեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, սակայն խնդրել են Ցուցակում ընդգրկել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորինս կարճ ժամկետով:

3. <u>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 11.07.2013թ. ԱԾ/ԱՊN16/2011/239-13 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովը 2013թ. մարտի 20-ի թիվ 75-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) գնումների շրջանակներում հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց, ինչի կապակցությամբ ներկայացնելով կայացված որոշման պատճենը՝ խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը և անհատ ձեռնարկատերերին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 14.08.2013թ. թիվ 05/032-1079 գրությամբ դիմել է Հանձնաժողովին՝ խնդրելով ներկայացնել տեղեկատվություն Որոշումն ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Հանձնաժողովը 20.08.2013թ. թիվ ԱԾ-1437 գրությամբ հայտնել է, որ 20.03.2013թ. N 75-Ա որոշումն ուժի մեջ է մտել նույն որոշման 9-րդ կետի համաձայն՝ չներկայացնելով Որոշման պատճենն Ընկերությանը և անհատ ձեռնարկատերերին հանձնելու փաստը հավաստող ապացույցներ, մինչդեռ, նույն որոշման 9-րդ կետի համաձայն՝ Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Մադոննա» ՍՊԸ-ին և անհատ ձեռնարկատերերին հանձնելուն հաջորդող օրվանից:

Կենտրոնը 03.02.2015թ. թիվ 05/032-153 գրությամբ կրկին դիմել է Հանձնաժողովին՝ խնդրելով ներկայացնել Որոշումն ուժի մեջ մտնելու վերաբերյալ ապացույցներ, այսինքն՝ Որոշման պատճենն Ընկերությանը և անհատ ձեռնարկատերերին հանձնելու հանգամանքը հավաստող ապացույցները:

Հանձնաժողովը 09.02.2015թ. թիվ ԱՀ-277 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել Որոշման պատճենը «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի կողմից ստանալու հանգամանքը հավաստող ծանուցագրերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-08/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ «Մադոննա» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Ռաֆայել Գրիգորյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի թիվ 75-Ա որոշման 3-րդ կետով մի շարք սոցհաստատությունների կողմից 2011 թվականի պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցույթներում «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի միջև հաղթողի վերաբերյալ նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը, որի արդյունքում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների անարդյունավետ օգտագործում, համարվել է հակամրցակցային համաձայնություն:

2. Որոշման 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար «Մադոննա» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Ռաֆայել Գրիգորյանին տրվել է նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

3. Որոշման 9-րդ կետով սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Մադոննա» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Ռաֆայել Գրիգորյանին հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Հանձնաժողովի 09.02.2015թ. ԱՀ-277 գրությամբ Կենտրոն ուղարկված ծանուցագրերի համաձայն՝ Որոշումն անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին և Գառնիկ Վարդերեսյանին հանձնվել է 27.03.2013թ., «Մադոննա» ՍՊԸ-ին՝ 29.03.2013թ., իսկ Ա/Ձ Ռաֆայել Գրիգորյանին՝ 06.05.2013թ.:

5. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի թիվ 75-Ա որոշումը չի բողոքարկվել:

5. ՍՑ-ԳԲԽ-08/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. թիվ 1.1/13.3/[9984]-13 գրությամբ ներկայացված ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 11.07.2013թ. ԱՇ/ԱՊՈ16/2011/239-13 գրությունը և «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի թիվ 75-Ա որոշումը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 20.08.2013թ. ԱՇ-1437 և 09.02.2015թ. ԱՀ-277 գրությունները, լսելով Կենտրոնում 09.04.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Մադոննա» ՍՊԸ-ի ներկայացուցչի և Ա/Ձ Վահրամ Մելքոնյանի կարծիքները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 125-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամսվանից մինչև մեկ տարի ժամկետով, եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ ընդունվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար:

Այսպիսով, Որոշման 3-րդ կետով մի շարք սոցհաստատությունների կողմից 2011 թվականի պետական գնումների շրջանակներում հայտարարված մրցույթներում «Մադոննա» ՍՊԸ-ի, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանի, Վահրամ Մելքոնյանի, Գառնիկ Վարդերեսյանի և Ռաֆայել Գրիգորյանի միջև հաղթողի վերաբերյալ նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը, որի արդյունքում տեղի է ունեցել մրցակցության սահմանափակում և պետական բյուջեի միջոցների անարդյունավետ օգտագործում, համարվել է հակամրցակցային համաձայնություն, և նշված անձանց առնչությամբ Հանձնաժողովի ընդունած որոշման պայմաններում առկա է Կարգի 125-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված հիմքը վերոհիշյալ տնտեսավարող սուբյեկտներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ «Մադոննա» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին, Վահրամ Մելքոնյանին, Գառնիկ Վարդերեսյանին և Ռաֆայել Գրիգորյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել. «Մադոննա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 05512212), անհատ ձեռնարկատերեր Անահիտ Խալաթյանին (ՀՎՀՀ 60509377), Վահրամ Մելքոնյանին (ՀՎՀՀ 60509385), Գառնիկ Վարդերեսյանին (ՀՎՀՀ 57262425) և Ռաֆայել Գրիգորյանին (ՀՎՀՀ 57279331)

ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության և վերը նշված անհատ ձեռնարկատերերի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված մեկ տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-08/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան